Դաս 3-4. Մեր հարևանները (Վրաստան, Ադրբեջան, Իրան, Թուրքիա)

Լրացուցիչ նյութ

Այվազովսկու ցասումը

Հովհաննես Այվազովսկու մասին պատմում են, որ նա Թեոդոսիայում, լսելով հայկական կոտորածների բոթը, ատելությամբ է լցվում թուրք ջարդարարների դեմ: Նկարիչը զայրացած վերցնում է իր նկարների համար տարիներ առաջ սուլթան Աբդուլ Ազիզի տված ադամանդյա շքանշանները, կապում է դրանք շան վզին և դուրս գալով տնից՝ ուղղվում է դեպի ծովափ: Այստեղ նա նստում է մի ձկնորսական նավակ, հեռանում դեպի բաց ծովը, շան վզից հանում թուրքական շքանշանները և, ի նշան բողոքի, դրանք նետում է ջուրը:

Ճնարամիտ կաթողիկոսը

Պարսկական տիրապետության ժամանակ Երևանի խանը Էջմիածնի կաթողիկոսին վիրավորելու համար մի խուրձ յոնջա (առվույտ) է ուղարկում նվեր: Կաթողիկոսը ընդունում է նվերը և պատվիրում է Էջմիածնի ոչխարների հոտից ընտրել մի լավ ոչխար և փոխադարձաբար ուղարկել խանին: Խանը զարմանում է, որ կաթողիկոսը իր վիրավորանքին այդպես պատվով է պատասխանել: Հասկանալու համար, թե ինչումն է բանը, նա հատուկ մարդ է ուղարկում կաթողիկոսի մոտ: «Խանը իր սիրած կերակրից է ուղարկել, ես էլ՝ իմ»,– ասում է նրանց կաթողիկոսը: